


ՊԱՅՄԱՆՔ

Յարկան գին Կ. Պօլոյ 40 Մճ.
Գաւառաց 2 լիւր
Վեցամս Կ. Պօլոյ 5 Մճ.
Գաւառաց 1 լիւր
Օտար երկիրներու 50 Պր.
Դանուցման տողը մէկ անգամի հա-
մար 3 զուրու, երկու անգամի հա-
մար 2 զուր է. աւելի անգամներու
համար գատ սակարկութիւն կը-
լայ :
Իւրաքանչիւր թիւ 40 վարա պղինձ :



ԼՐԱԳԻՐ

ՀԱՆԱՊԱԶՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գնացած լրագրաց ճանրու-
ած արքայ խորագրութեան վրայ է :
Լրագրաց վերաբերեալ նամակ
կամ որ և ինչ գրութիւն խորագր-
—Տնօրէնին պիտի ուղղուի, Ղաւա-
թիա Սանտրաքթարի Հաստիսի թիւ
198, Նոթո կամ Կոստանի քրասն
եակը :
Հանրու ծախքը սխալութեամբ նա-
մակ չընդունուի :
Չարքաւած նամակը յօդուած, եւ
եւ չեն տրուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿԱՍԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 10 ԱՊՐԵԼ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ռուսիոյ արտաքին ազատարարու-
թեան գործը դժբաղդաբար ներքին
բռնաւորութեան մը կը յանգի : Ռուս
ժողովուրդը Պուլլաւայ ազատութեան
համար այնչափ դժուորութիւններէ ե-
տեւ չկրնայ իւր ամենասիրելի բաղ-
ձանքները պահած տեսնել և ազա-
տակար օրէնադրութիւններ ընդու-
նել, յուսահատական ընթացիկ մէջ
ինկաւ և դաւադրութիւնները բաղ-
մանց Կայսեր կենաց գէժփորձուած
դաւաճանութիւնը դժգոհութեան
վերջին աստիճանը կը ցուցնէր, բաղ-
ման ձև սպառնալից նամակներ կը դըր-
կուէին բարձր պաշտօնաւորաց Կոս-
տայի մէջ Պալաթի վարչական աղ-
նուական երկատարող մը մինչդեռ
իւր դահլճին մէջ քանի մը բարեկա-
մաց հետ կը խօսէր, Բրասքովիա Բաշ-
քա անուն տառն և ինն տարեկան աղ-
ջիկ մը ներս մտնելով Ռեփօրթը քա-
ջեց և յիշեալ երկատարողն սպան-
նեց, յետոյ ամենայն հանգարտու-
թեամբ ոտով կանուխեան անձնա-
տուր եղաւ : Ռուսական լրագրից կը
գանդաւորէին թէ Եւրոպիոյ մէջ Ռու-
սիոյ ունեցած թշնամիները ներքին
յեղափոխական շարժումը չափազանց
մեծ ցոյց կուտան և կը պնդեն թէ
Ռուսիա անխելանութեան մասնուած
է, որպէս զի անոր արտաքին աղբե-
ցութիւնը կտորեն է Կոլոս կըսէր թէ
հիւանդութիւն մը կայ, բայց այն-
չափ խորին կերպիւ արմատացած չէ
ընկերութիւնը, թէ և իւր գէժ ըս-
պառնալիք կայ, վտանգի մէջ չէ մի-
այն պէտք է որ զգուշութիւններ ձեռ-
առնու և անխելանական շարժում
ները զսպելու համար օրինաց պա-
հապաններուն օգնէ : Այս խորհրդա-
ծութիւնները ճիշդ չեան կայսեր գէժ
նիւթուած վերջին դաւադրութեան
վրայ, որ հիւանդութեան կարծուա-
ծէն աւելի մեծ և խորաբնու լինիլը
կը ցուցնէ : Ստոր համար Ռուսիա զըս-
պողական խիստ միջոցներ ձեռք առ-
նելու կը պարտաւորի անխելանական
նայ գէժ, և գրեթէ երկրին մեծ մա-
սը պատերազմական օրինաց և զին-
ւորական կառավարութեան ներքե
կը դնէ : Պատերազմը Ռուսիոյ խիստ
ծանր նստաւ, յեղափոխութիւնն ու
ու ժանտախտն իւր մէջ ճարակեցան :
Արդարեւ վերջին նիւթուած հիւան-
դութիւնն անհետանալով վրայ է, և
բայց առաջին բարդական հիւան-
դութիւնն ինչպէս պիտի վերնայ :
Տարակուսելի է որ զսպողական մի-
ջոցները զայն բաւանալու կարող լի-
նին : Ընդհակառակն՝ կը վախճուի
թէ որչափ խիստ լինի ճնշումն, այն-
չափ ևս դաւադրութիւնն ալ նուրբ
և ծայրայեղ լինի : Գուցէ զըսու-

թեան փոփոխութիւն մ'աւելի օգ-
տակար լինի ընկերութիւնը ծանր վը-
տանգէ մ'ազատելու, և թուրքիոյ
համար Ռուսիոյ տուած խրատները
կարենան իրեն համար ալ իրեն վըր-
կութեան միջոց ծառայել :
Պուլլաւայ ապստամբութեան
ժամանակ Եւրոպական տէրութեանց
հետ չի միասին Ռուսիա ևս խորհուրդ-
կուտար Բ. Դրան, որպէս զի Պուլլա-
ւայ ինքնօրինութիւն չնորհելով ժո-
ղովուրդը դո՛ւր ընէ : Նոյնը կրնայ ը-
նել Ռուսիա ալ սահմանադրութեան
մը, որ իւր ժողովրդին ազատարար-
կան փափաքները դո՛ւր ընելով՝ դա-
ւադրութեանց առաջն առնու :
Եւրոպիոյ ամենէն ազատ երկիր-
ներուն՝ Անգլիոյ և Գաղղիոյ մէջ,
ուր ժողովուրդն ամեն խնդրոց վրայ
իւր կարծիքը կուտայ և իւր գործե-
լըն ինքնին կը տնօրինէ, ընկերական
և ոչնչական յեղափոխականք առաւել
նուազ են : 1870ի պատերազմէն ետեւ
Գաղղիա ընկերային (քօմիւնիսթ) յե-
ղափոխութիւն մ'է սարսափելի ա-
պստամբութիւն մը զսպելու պար-
տաւորեցաւ : Բարեբաղդաբար՝ ա-
զատական դրութիւնը վտանգն այն-
չափ անհետացուց, որ աղբային ժո-
ղովն, իբրեւ գերագոյն իշխանութիւն,
առանց երկիւղի կըրաւ արքայազ-
մընկերային ապստամբաց ընդհանուր
ներսդրութիւն չնորհել, և անոնց վը-
րադարձին համար քաղաքապետական
խորհուրդն ալ հարիւր հարար Փրանք
ճանապարհի ծախք նուիրեց, Պ. Լուի
Պլանի և Վիլիամ Զիլկովի թողով այս
գոտարիւնաշխուհի Գաղղիոյ և Անգ-
լիոյ մէջ առեւտրական տագնապին և
գործարանաց շատերուն մէջ աշխատո-
ղաց նուազման պատճառաւ տնտեսա-
կան նեղութիւն մը կայ, սակայն գործա-
ւորք օրէնքը կը յարգեն և Գերմանիոյ
ընկերականաց և Ռուսիոյ Ոչնչականաց
ծայրայեղ դաւադարներն անձանթ
կերեն Եւրոպիոյ ուրիշ կողմերն ի
չնորհա ազատութեան : Կրնայ ըսուիլ
ուրեմն թէ ճշմարիտ ազատութիւնը
գերթափ մ'է յեղափոխական թոյնը
մաքրելու համար և ապահովութեան
խուփ մ'է չողիով լցուած մեքենայի
մը պայթուածն որդիելու համար : Ա-
զատութեան չնորհել ամեն մարդ-
իւր կարծիքը կը յայտնէ մասիոյ միջո-
ցաւ կամ խորհրդարանի մէջ, աշխարհ
կը լսէ և կը դատէ զանոնք, և անհե-
թեթ, ծայրայեղ և քնասակար դա-
ւադարք չեն կրնար հասարակութեան
ընդարձակ և ողջամիտ մասին քով
ընդունելութիւն գտնել : Հասարա-
կաց դատողութիւնն իւր վճիռը կու-
տայ, և ամենայն ոք իւր իրաւունքը
վայելելով կըրքերը չեն զայրանար :
Ուր որ ազատութիւնը բռնութեան և
սասայիկ միջոցներու հարկ չթողուր,
հոն կըրքերը կը բարեխառնին :

Մայրաքաղաքէս ապրիլ 9 թուով
Անգլիոյ լրագրաց ուղղեալ հեռագիր
մը կը ծանուցանէ թէ Արեւելեան Ռու-
մէլի կաղմաւորութեան դաւադր Նե-
րուական յանձնախումբն անգամները
Բ. Դրան հետ համաձայնեալ են այն
երեք կէտերուն վրայ՝ որոց կարգադ-
րութեան համար Կ. Պուլիս եկած են :
Որոշուեալ է, որ այն դաւառաց մէջ,
ուր ժողովուրդը խառն է, փոքրա-
մասնութեան լեզուն ալ մեծամաս-
նութեան լեզուն հետ պաշտօնա-
պէս պիտի գործածուին, բաւական
է որ այն փոքրամասնութիւնը մե-
ծամասնութիւն ունեցող աղբիւն կէ-
սին հաւասար լինի : Ըստ Պէրլինի
դաւադրութեան, Արեւելեան Ռումե-
լի նահանգին կողմանէ Օսմանեան
դաւադրութեան վճարուելիք տուրքին գու-
մարը՝ նահանգին ընդհանուր հա-
տոյթին մէջ երրորդը լինիլ որոշուած
է : Վիճաբանութեան ներքեւ դանդ-
ւող երրորդ կէտին դաւալ, որոշուեալ
է որ Վեհ. Սուլթանն այլ և այլ հասա-
րակութեանց պարզ խնդրանքն ա-
նոնց եպիսկոպոսներն անուանէ :
Արեւելեան Ռումէլի յանձնախումբ-
ը, նահանգին մէջ գտնուող վաղար-
ներուն կարեւոր խնդրով կ'զբաղի այ-
ժմ, որոյ վրայ, ինչպէս երէկ ծա-
նուցինք, Բ. Դուռը ծրագրել մը ներ-
կայած է յանձնախումբին :
Այլքօ Վոկորիտէս փաշային Արե-
ւելեան Ռումէլի ընդհանուր կառա-
վարի անուանին յիշեալ դաւառին
առթիւ ծագած դժուարութիւննե-
րը լուծելու միջոց մը կը համարին
Եւրոպական լրագրից :
Նոյն իսկ Ռուսական լրագրաց
խօսքին նայելով, Այլքօ փաշային ան-
ւանումն ամեն կողմէ գոհ կընէ, մաս-
նաւորապէս Պուլլաւաներն, որոց աղ-
դակից և կրօնակից է Այլքօ փաշան, և
վերջին պատերազմին ժամանակ բըռ-
նած ընթացիկքն անոնց համակրու-
թիւնը գրաւած է : Գաղղիական թան-
լրագիրը կըսէ թէ Պուլլաւայ աղբա-
լին ժողովը դիտմամբ իւր աշխատու-
թիւններն երկարածքեց, որպէս զի
իշխանին ընտրութիւնը չկրնայ կա-
տարել : Պուլլաւայ նշանաբանն այս
էր. «Իշխանին ընտրութիւնը չկատար-
եւ մինչև որ Արեւելեան Ռումէլի
ինքիւրը չլուծուի» : Պուլլաւայ Արեւե-
լեան Ռումէլին Պուլլաւայի հետ միա-
ցընելու համար Եւրոպիոյ հաւանու-
թիւնն ստանալու յոյս չունենալով,
առայժմ գոհ պիտի լինէին իրեն ան-
կախ Պուլլաւայի հետ ինքնօրէն նա-
հանգին անձնական միութիւնը ձեռք
բերէին, այսինքն եթէ միևնոյն անձն
Արեւելեան Ռումէլի ընդհանուր կա-
ռավարից և միանգամայն Պուլլաւայի
իշխան անուանէր :
Այս նպատակին հասնելու հա-
մար Պուլլաւայ միակ ընթացք մ'ու-

նէին բռնելը, այն է իշխանին ընտ-
րութիւնն յետաձգել մինչև Արեւե-
լեան Ռումէլի ընդհանուր կառավար-
չին անուանումն, որպէս զի զայն ի-
րենց իշխան ընտրեն եթէ ծանրա-
բեւր մը չգտնեն :
Թանին այս կարծիքն իրանալու
հաւանականութիւն կընծայէ, որով
հետեւ նոյն իսկ Պրիւսիոյ Նոթ. լրա-
գիրն, որ Ռուսական աշխարհակա-
րութեան արձագանք է, Այլքօ փա-
շային անուանումը մեծ համակրու-
թեամբ կողջունէ, հետեւաբար նե-
րելի է ենթադրել թէ Պուլլաւայ ա-
ռանց դժկամութեան իրենց իշ-
խան ընտրեն զայն :
Այս կերպիւ Այլքօ փաշան իւր
ձեռուց մէջ կը միացնէ հիւսիսային
և հարաւային Պուլլաւայի վարչութիւ-
նը : Պուլլաւայ, թէ և քանի մը տարի
անկատար միութիւն մը կուենան ի-
րենց առջև, բայց վերջնական միու-
թեան դրաւական մը կը նկատեն
զայն : Հետեւաբար անմիջական խը-
սուցութեանց երկիւղ չմտար : Միան-
գամայն Պէրլինի դաւադրութեան
տրամադրած բաժանումն երեւակա-
յական լինելով հանդերձ, յարգուած
կը լինի :
Այնուչափ Բ. Դուռն՝ Այլքօ փաշան
անուանած ժամանակ՝ այս հետեւանք-
ները չնախատեսած չէր կրնար լի-
նիլ : Բայց կերելի թէ նոր արեւելե-
ղութեան մը պատահականութեանց
առջև, որ կրնար նորանոր կնճիռներ
ծնանիլ, այս կարգադրութիւնը նուազ
վնասաբեր դատած է :
Պուլլաւայ Աղբային ժողովն իւր
նախագահին բերնով չնորհալալու-
թեան ուղերձ մը զրկեց Պ. Կլաւսթօ-
նի Պուլլաւայ նախաձեռն ցոյց աղ-
ւած համակրութեանը համար : Նը-
մանօրինակ ուղերձ մ'ալ Տէյլի Նիդ-
լաւայի խմբագրապետին զրկեց հե-
ռագրով :
Հանտայէն հեռագիր մը կը ծա-
նուցանէ թէ Արեւելեան Ռումէլի Պուլ-
լաւ պատուիրակներն, որք յիշեալ
նահանգը Պուլլաւայի իշխանութեան
հետ միացնելու մասին Եւրոպիոյ հա-
մարութիւնը զարթուցանելու հա-
մար անցեալները ճանաչաւ եւս էին,
կիրակի օրը Հանտայ հասեր են :
Պուլլաւայ Աղբային ժողովն աղ-
բիլ 9ի նստին մէջ Մահմանդու-
թեան 38 յօդուածոց վիճաբանու-
թիւնն աւարտեց և մինչև 117րդ յօդ-
ւածն յաւաքեցաւ : Դժոյժ յօդուա-
ծը կատարեալապէս բարեփոխուելով
որոշուեցաւ որ սովորական աղբա-
լին ժողովն ամբողջապէս ընտրական
լինի, և իւրաքանչիւր անգամ երկու
սեռէ 10,000 հարկ ներկայացնէ : Ժո-
ղովն երեք տարի պաշտօն պիտի վը-

բէ : 21 տարեկանն լրացուցած ամեն քաղաքացի , որ քաղաքացին իրաւունքները վայելէ , ընտրողութեան իրաւունքը պիտի ունենայ . իսկ ընտրելի լինելու համար՝ 30 տարին լրացուցած պէտք է լինի , և Պալլադի բերէն լեզուն կարգաւ և գրէ : Կը ծանուցուի թէ Տօնաւորքի ֆորսանքի իշխանն ստիպողական հրամաններ տուեր է Սահմանադիր ժողովին ընտրութիւնը փութացնելու , որպէս զի նա ալ Պալլադի իշխանին ընտրութիւնը կատարէ՝ մինչև մայիս 3 :

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Այս առաջը հասած հետքերը

Վիէննա 21 ապրիլ
Ֆրանչիսկո-Յովսէփի կայսրն իւր ամուսնութեան 23րդ տարեդարձին առթիւ բոլոր նախարարաց , Հռոմի արքայի , Երեսփոխանութեան և Երեսփոխաց Աւագած ժողովին շնորհաւորութիւններն ընդունեց :

Փարիզ 21 ապրիլ
Գաղղիոյ կառավարութիւնը Պատուոյ Լէգէոնի խաչը տուաւ քանի մ' Օսմանեան սպայից :

Գահիրէ 21 ապրիլ
Եգիպտոսի դանձուն տեսուչները բացարձակապէս բողոքեցին Կոչնի պայմանադրութեան գործադրուելու խնդրանաց դէմ :

Աթէնք 21 ապրիլ
Անհինն է այն լուրը թէ Յունաստան Պէրլիի դաշնադրութեան իրեն տուած իրաւանց գործադրութիւնը բոլոր կարելի միջոցներով պահանջելու գիտաւորութիւն չունի , ընդհակառակն՝ Յունաստան որոշած է Պէրլիի վաճառողին յայտնաւորել իր անհրաժեշտութիւնը քանի որ Եգիպտոսի համար ամեն բան զոհելու է :

Փարիզ 21 ապրիլ
Երէկ ութ չըմանակաց մէջ համեմատականի մնացած ընտրութեանց արդիւնքն եղաւ հինգ հանրապետական , մէկ արմատական և երկու պահպանողական :

Լոնտոն 21 ապրիլ
Երեսփոխանաց ժողովին մէջ , Սըր Սթաֆորտ Նորթքոթ անգլիական բանակին Աֆղանստանոյ մէջ յառաջխաղացումը սուտ հանեց :

Լոնտոն 21 ապրիլ	
Օտն . Բօնս .	11 1/4
Փոլս .	1863 44 3/8
»	1869 44
»	1871 49
»	1872 20 1/2
»	1873 42 5/8
» Եգիպտոս .	63
Անգլ . Բօնս .	99 3/16

Փարիզ 19 ապրիլ	
Օտն . Բօնս .	11.45
Գաղղ . Բօնս .	30/0 78.22 1/2
»	» Նոր 81.35
»	» 30/0 115

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Աւստրո-թուրքական պայմանադրութիւնն՝ երկար և տաժանելի բանակցութիւններէ ետեւ՝ վերջապէս երէկ իրիկուն ստորագրեցաւ Բ. Դուռն : Ինչպէս յայտնի է , այս պայմանադրութիւնը Պոստիոյ-Հէրսէքի և Նօվի-Պադարի առ կախ մնացած խնդիրները կը կարգադրէ : Ուրբաթ իրիկուն կայսերական պալատը վեհաժողովանին նախագահութեան ներքեւ նախարարաց խորհուրդը գումար լեզով , պայմանադրութեան ծրագիրը կարգադրած և Ն. Կ. Վեհափառութեան մտցնելու ղաժ ըստ բարեփոխութեանց վրայ խորհուած էր : Երէկ Օսմանեան պատուիրակներն Աւստրիական պատուիրակաց հետ այս բարեփոխմանց վրայ երկար վիճաբանեցան , և ի վերջոյ ստորագրեցին :

Վաղը լրագիրն յիշեալ պայմանադրութեան Նօվի-Պադարի խնդրոյն վերաբերեալ քանի մը արտադրութիւնները կը հրատարակէ : Նօվի Պադարի գաւառին մէջ Աւստրիացիք վար-

չական և դատական գործոց չարիք միջամտեն , այլ Օսմանեան վարչութիւնը պիտի շարունակէ ըստ առաջնոյն : Յիշեալ դատաւոր մանելիք Աւստրիական դորաց թիւն որոշուած է պայմանադրութեան մէջ , և անկէ աւելի չպիտի կրնայ լինիլ . իսկ Օսմանեան կառավարութիւնն ազատ պիտի լինի ուղածին չափ գործ գնելու հոն : Աւստրիական դորաց Նօվի-Պադարի գաւառին մէջ գերուելիք երկու կէտերն ալ որոշուած են , ուր Օսմանեան դորք ալ պիտի կրնայ դուրսիլ : Երէկ Բ. Դուռն Եւրոպական մեծ տերութեանց մօտ դանտող իւր գետնաւանց ծանոցը Աւստրո-թուրքական պայմանադրութեան կրնալ ըսելիք :

Մայրաքաղաքիս Աւստրիական դեսպան Չիլի կոմսը՝ պայմանադրութիւնն անհամբար վիէննա տանելու համար յառաջիկայ ուրբաթ օրը պիտի մեկնի մայրաքաղաքէս :

Վիէննայի Օսմանեան նորընտիր դեսպան Էտհէմ փաշան , որ Աւստրո-թուրքական պայմանադրութեան կնքուելուն կ'սպասէր , քանի մ' օրէն իւր պաշտօնատեղին պիտի ուղեւորի :

Վիէննայի Օսմանեան նախորդ դեսպան Էսաթ պէյ , որ արտաքին գործոց նախարարութեան խորհրդական (միւսթէշար) անուանած էր , ուրբաթ օրը մայրաքաղաքս հասաւ , և հետեւեալ օրն իւր պաշտօնին դըրուան անցաւ :

Մայրաքաղաքիս Անգլիական դեսպան Սըր Հէնրի Լայպոն Կ. Պոլս դալու համար կիրակի օրը Լոնտոն յեն մեկնեցաւ : Դեսպանը քանի մ' օր փարիզ պիտի կենայ և վերետիկի ճանրով մայրաքաղաքս պիտի դայ՝ հաւանականաբար յառաջիկայ շաբթու :

Կարնոյ նորընտիր կուսակալ Մուսթաֆա Ֆոսթօր փաշան կիրակի օրն իւր պաշտօնատեղին ուղեւորեցաւ :

Մայրաքաղաքիս Հելլենական դեսպան Պ. Բուստուրլուօթի , որ Աթէնք դնացած էր , երէկ առաւօտ Կ. Պոլս վերադարձաւ :

Կիրակի օրը մայրաքաղաքիս Յուսնաց պատրիարքը՝ Բ. Դուռնէ հրաման ստանալով՝ հանդիսաւոր պատարագ մատոյց Ալեքսանդր կայսեր կենաց դէմ՝ փորձուած դաւաճանութեան ի դերեւ ելնելուն համար : Մայրաքաղաքիս Ռուսական դեսպան Լուպոնով իշխանն հանգերձ դեսպան նստան պաշտօնէիւք , նոյնպէս նաեւ Հելլենական դեսպանատան բոլոր պաշտօնատարք ներկայ էին արարողութեան :

Ժամանակէ մ' ի վեր խախտեալ Լէվանթ Հէրալտ լրագիրն , որ Բօնս թանկիւնով Մէսէնքըր անուամբ կը հրատարակուէր , դարձեալ Լէվանթ Հէրալտ անունով հրատարակուելու հրաման ստացաւ :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ	
ԷՍՏԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ	
Երէկ իրիկուն գոյուեցաւ	42.47
Այս առաւօտ Գոյուեցաւ	42.46
» Կէս օրին	42.44
Բուսթի իրիկուն գիր	42
Թղթաղրամ	910

ԸՆԹԱՅՐ ԳՐԱԲՈՅ	
9 Ապրիլ	
Անգլ . Բօնս .	109 30
Նոր օրէն Բօնս .	87 28
Իսթ . Բօնս .	89 28
Գըրմ . Բօնս .	51 42

Մէսիսի թարգմանութիւն	4 26
Հինգ շաբ	409
Պիւնի	435 1/2

Ա. Գ. Ա. ՅԻՆ

Մարաշէն մարտ 12 թուով հետեւեալ նամակն եկած է ի Պատրիարքարան :

« Այս կողմերու Հայութեան վիճակն օր օր վատթարանալու վրայ է . տեղացի մահմետականներէ՝ նա մահաւանդ Չէրքէս և թաթարադարձականներէ՝ բրիտանիցի կրած հաւաքածանքը , զրպարտութիւնքը , անողորմձեռքերէ սպանութիւնքը , դիւշերները խուճախու մէջ Չէրքէզացի և թաթարացի՝ Գրիստանից տունները մանկավ՝ դայր և զիկն դանազան տանջանքներով կ'սպաննէ վէրքերու մէջ թողուլ , և տանը մէջ դանաւած դոյքերն յափշտակելն օր քան զօր կաւելնան , յորոցմէ միայն այս շաբթու մէջ պատահած երկու սոսկալի դէպքերն հակիրճ պատմեմք :

Երեք օր յառաջ , ուրբաթ դիւշեր , Մարաշէն մէջ Չիլիկի բնակած թաղը Զաւոյլու Պետրոս և Աւետիս անունով երկու եղբոր իրարու կից տունները՝ քանի մը Չէրքէզ և տեղացի սրկիկայ տաճիկներ կը մոտեն և բռնութեամբ ներսի դուռը բանալով՝ դաշոյնին քաշած յիշեալ երկու եղբոր և անոց մանկամարդ կիներուն վրայ կը դիմեն , և խեղճերը քանի մը ժամ սիրտ չդիմանալու վիճակի մէջ տանջելէ և վիրաւորելէ ետեւ՝ մանկամարդ կանանց վրայ եղած ոսկի զարդերը կը յափշտակեն ու կը մեկնին :

Այժմ՝ նոյն ընտանիքն այլ և կին՝ բոլորն ալ ծանր վէրքերու և ծանր հիւանդութեանց ենթակայ ըլլալով , աւաղ , խեղճերուն տունն ու հաղուսանքն արիւնով ներկուած է :

Նմանապէս այս իրիկուն ժամը 7 ին միջոցները Գրիստանից պատուաւոր դերդաստաններէն կարապետ Էֆէնտի թօփաւեանի տունը 13 չափ Չէրքէզ , թաթար և քանի մ' ալ Մարաշի Տաճիկներ մանկավ՝ և բուռն զօրութեամբ սենեակին դուռը բանալէն զինի՝ սուր ի ձեռն յիշեալ Էֆէնտիին տիկնոջ վրայ կը դիմեն , և կարապետ Էֆէնտին քանի մը տեղէն վիրաւորելով և տիկնոջ ունեցածները կողպաւելով կը մեկնին :

Զարմանալին այն է որ այս չարութեանց ամենն ալ Գրիստանից կը պատահին և ոչ երբէք թուրքաց , որքայս մասին խաղաղ վիճակի մը մէջ կը գտնուին :

Հիմա պիտի ըսուի թէ հոգ կառավարութիւն չկայ . այո՛ , այս միջոցին չկայ՝ կառավարութիւն . տհաքանի մ' օր առաջ քանի մը Չէրքէզ Մարաշէն կից Հայոց դերեզմանատան եղբը Ֆռնուղիներուն հետ դըրատներն տուն , և նոյն Չէրքէզներէն մին բռնուելով՝ բանալ դըրած առններն՝ անմիջապէս 100 չափ Չէրքէզը սպառնալիս կառավարութեան պաշտօնաւորն կ'սրկեցին , և հաղարապետն անշուշտ պիտի ըսպաննէին , եթէ տերութեան զինուորը չփութային և բանաւորիկեալ Չէրքէզն ազատելով՝ խնդրել չվերջանէին :

Տեսէք , կառավարութիւն կայ եղբր Մարաշէն մէջ . այո՛՝ կառավարութիւն կայ Մարաշէն մէջ՝ մի միայն թուրքերը սպառնալու և Մարաշի , Ուլնեցի և այլ խեղճ դիւղացի Հայերը ճնշելու և իրաւունքն փր-

ճացնելու համար , ինչպէս որ փորձով տեսնուեցաւ :

Մարաշէն մօտ Խարթլապ ըսուած տեղն Հայոց աղղէն և Մարաշի ետեւի գերդաստաններէն Մարք Միւնիկեանի տունը Խարթլապի 12 չափ թուրքեր կ'սրկեալ՝ բոլոր ինչք , կահ և կարասիք յափշտակելէն զինի , խեղճ կնոջ պատիւն ալ բռնաբարելով՝ կիսամահ վիճակի մէջ կը թողուն :

Երեւոթիւնը կառավարութեան կը հաղորդուի , վիճակով կ'ստուգուի , և 8 հոգի կը բանաւորուին , բայց քանի մ' օրէն ազատ թող կը արուին :

Կը թողու մ' արիւն առաջ Մարաշէն շրջակայներն 130 չափ ծանրորդներէն Խարթլապի վաճառական Հայու մ' սպաննուին և ունեցած դըրամին կողպաւելի : Ալպուստանի այգետան մէջ երկու Հայու սպաննուելիք , ճիհանի կամուրջին եղբը Ալպապիցի Բրիստանից ջաղացարանին ըսպաննուին և ութ կամ տասն օր առաջ երեք հոտ Ուլնեցի Հայոց Չէրքէզներէն ու թուրքներէն սպաննուին եւ եւ :

Մարաշէն եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ տերութեան կողմէ զրկուած լիազօր քննիչներն Հայէպէն Մարաշ հասեր են , ուր քննութեանց պիտի ձեռնարկեն :

Թ. Դ. Ա. ՅՈՒՅԻՆԻՔ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ

Հայէպ 22 մարտ 1879

Աղիւս Մասիս .

Դատաւիս կուսակալ Քեմալի փաշան ամսոյս 17 ին հանդիսաւոր կերպով մեկնեցաւ ի Կ. Պոլս , Չէրթունի խնդրոյն մէջ իւր բռնած քաղաքականութիւնն և իր տեղեկագիրներն հարկ եղած տեղը նպատաւոր ցուցնելու համար՝ քաղաքիս երեւելներէն , բացի հիւպատոսներէն և Սրբազան կաթողիկոսէն , շնորհակալութեան ստորագրութիւններ ստացած է :

Ուլնեցիք իրենց անձուկ չըմանալին մէջ փակուած են տակաւին . Չէրքէզներէն՝ որոնք խիստ բազմաթիւ են այժմ այն կողմերը , և չըմալոյ թուրք բնակիչներէն կ'ողորպտուին ու կ'սպանուին , այս վերջին մէկ տմսուան մէջ սպաննուածներուն թիւը 7 ի հասած է . երեք ճիհան գետին մօտ Չէրքէզներէն սպաննուած են . և մնացածները դարձեալ Չէրթունի մօտ այլեայլ տեղեր սպաննուած են , սակայն Ալպուստանի Դաւաճ Չէրթունեցոյ արտօնութիւն տուած է իր կառավարութեան վերաբերեալ բընակաց հետ յարաբերութիւն ընելու , իսկ զի նոյն կողմերը գտնուած բնակիչներն , որոնք բոլորովին թուրքերէ կը բաղկանան , Ուլնեցոյ հետ յարաբերութիւն ընելու անհրաժեշտ պէտքեր ունին , մանաւանդ երկաթի և Չէրթունի այգիներէն առաջ եկած բերքերուն :

Չէրքէզները Մառաշէն մէջ և շրջակայքն այնքան շատցած են , որ այսօր այն քաղաքին ապահովութիւնն անվտանգ է . գիշերայն շատ անգամ տեղացի Տաճիկներու առաջնորդութեամբ տունները կը մոտեն , ընտանեաց մարդիկը կը վիրաւորեն , և տունները կը թաւնեն , վողոցներու մէջ և շուկաները Հայերը կ'անպատուին , կը գանակածուին :

Այս օրերս կ'իմանամք որ Մառաշէն մէջ գտնուած Միսիսները տեղական կառավարութեան գիմելով ապահովութիւն խնդրած են , և իրենց թէ նախկին և թէ անձնական ապահովութեան համար ոստիկաններ խնդրած են , բայց տեղական

կատարվում էր այդպիսի առաջարկներին մի անպատեհ դատած և որոշակի թվերով զրկված է . այս պատճառաւ յիշեալ Միտիմաններն Պիմիթայ եկած են իրենց ընտանիքներով :

Թէ՛ Ռւնեցւոյ և Թէ՛ Մարաշու Հայոց այս անսպասելիութիւնն յառաջ եկած է գաւառիս սրտոնի մէջ . մարդը անհրաժեշտ պիտոյքներէ զերկէն և երբ այն պիտոյքները գոհացնելու շարժումներ տեսնուի զերկէն իրեն . գող կամ ապստամբ հրատարակել և ըստ այնմ դատաւարուել : Ահաւասիկ արդարութիւն մը , եթէ կարելի է այս անունը տալ :

Քիչ մ'ալ կէօմբիւքեան Մովսէս վարդապետի ընթացից շարունակութեան վրայ խօսինք :

Կէօմբիւքեան փետրվար 16 կիրակի օրը Ս. Եկեղեցւոյ մէջ իւր առեւտրականութեամբը կ'աշխատէր Ս. Եկեղ. վարդապետներն Ս. յիշեալ երթալու հրաման ստացած չէ , թէ ըստածներն անտեղի են , թէ ինքը տեղ մը չպիտի երթայ , ուստի և իւր հակառակորդները տվրակաւ կերպով կը նախատէ . Ս. Եկեղեցւոյն դէմ յարձակումներ կ'ընէ , և նոյն իրիկունը իւր շատ անգամ կ'ընտան մարդասպանութեան փորձն 'ի գործ դնել տալու կը փորձէ : Նոյն իրիկունը իւր քանի մը գործիքները Սրբազան Կաթողիկոսին կը ներկայանան և կը պահանջեն իրմէ՝ Կէօմբիւքեանի առաջնորդութեան վաւերացումն , և այս առարկութեամբ մտադիր կըլլան Ս. Կաթողիկոսն անպատեհել , ինչպէս օր մ'առաջ Ս. Եկեղեցւոյ մէջ Մանիսայեան Արք. Ներսէս Ե. վարդապետի դէմ ցոյցեր ըրած էին քանի մ'անգամ և կ'ոյր մարդիկ : Ս. Կաթողիկոսը հասկնալով նոցա դիտաւարութիւնն անմիջապէս խումբ մը ոստիկան բերել կուտայ , Մովսէսի կ'ոյր առաքեալներն ոստիկանաց ներկայութիւնը տեսնելով ինքիւր կը փոխեն և կը ինքզինքն օր Ներսէս վարդապետը անպատեհներէն մին՝ որ բանտարկուած էր՝ ազատի :

Նոյն իրիկունը Կէօմբիւքեանի հակառակորդներէն երեք հոգի մէկուն տունը այցելութեան երթալու տանն փողոցը ոստիկաններու կը հանգրիւն որոնք Հայոց եկեղեցւոյն ուր տեղ ըլլալը չգիտնալով այս երեք անձանց կը հարցնեն և նոքա ալ կառաջնորդեն եկեղեցին ցուցնելու համար . այս անձանց երկուքը անհնար են՝ զորոնք Մովսէս վարդապետ կամ բաւական անխառնարար իրեն զինքը ձեռնդներ , մինչդեռ կառավարութեան դուռն հակառակը ապացուցուելով , այն երկու անձանց մէկը , իրեն՝ Կէօմբիւքեանի դրօշման եկեղեցւոյ բակը գնահատեալ անձինքը յանցաւորաւ դատուեցան , բայց 'ի Կէօմբիւքեանէ որ պատիժէ ողատ է Այն ձեռող անձինքը պիտի բանտարկուին որովհետեւ արդէն վերջին արտած է կառավարութեան 30 օրուայ բանտարկութեան պայմանաւ :

Վերոյիշեալ երեք անձինքը հազիւ թէ եկեղեցւոյ դռնէն կը մեկնին և իրենց երթալու տունը կը մօտենան , դաշիններով և ատրճանակներով զինուած քանի մը մարդիկ ետեւնուն կը հասնին և զանոնք սպաննելու համար չորս անգամ ատրճանակ կ'արարեն . գնալով մէկուն ձեռքին հանգրիւնելով ծանրապէս կը վիրաւորէ . եթէ շուտով դուռը չապուելով չկուրենային ներս մտնել , երեքն ալ ըստ պաննելու պիտի աշխատէին՝ ըստ Կէօմբիւքեանի առեւտրականութեան :

Նը : Ոճրագործները տալով ալ չբաւարարուելով դուռը կ'աւելնէ և ներս մտնելու կ'աշխատեն , բայց բարեբաղդ արար պահապանն ստիկանները վրայ հասնելով կը ցրուին . իսկ անոնք որ տանը մէջ տպաւինած էին՝ ոստիկաններուն հետ իրենց տունը կը վերադառնան :

Հետեւեալ օրը ոճրագործներէն երեքը միայն ձերբակալուելով կը բանտարկուին , և ինչ օր վերջը Ս. Կաթողիկոսի միջնորդութեամբ եւրաշխաւոր տալով բանաւն կազմաւորուին :

Այս ամբիւրից դէպքին վրայ Կէօմբիւքեան կը զիջան , խոնարհութեամբ Ս. Կաթողիկոսէն ներուստ կը ինքզինքն և կը խոստանայ ընելիք որոշմանցը հնազանդել , և իր խոստումները գրաւորապէս Ն. Վեհափառութեան կը մատուցանէ :

Այժմ մասնաժողով մը կազմուած է ըստ ինքրոց կարգադրութեան համար , որուն արդիւնաւորութիւնը յուսալի է :

Խմբագիր Տէր , թէ և երկար , յանուն արդարութեան սոյնը Ձեր պատուական լրագրոյն միջոցաւ հրատարակել բարեհաճեցէք :

Մտնչութիւն 4 ապրիլ 1879

. . . Խմբագիր Մարտի լրագրոյ .

Անցեալները Լոնտոնի մէջ Մեր պաշտօնակից երկիրը կամ Տաճարատան յԱսիա անունով զիրք մը հրատարակուեցաւ , որուն Անգղիոյն հեղինակը մասնաւորաբար կը նկարագրէ իւր Փոքր Ասիոյ մէջ ըրած ճանապարհորդութիւնը : Այս գրքին «Հայաստան և Քիւրտստան» վերնագրով գրուելու նշանաւոր է Քրդաց հիւրընկալութեան և մանաւանդ մեր Ազգին վերաբերեալ տեղեկութիւններով , որոնց մի քանին համառօտիւ հոս կ'ամփոփուի , որպէս զի՝ եթէ արժան դատե՞ք Ձեր աղագործութիւնն միջոցաւ հրատարակել բարեհաճե՞ք :

«Հասան-Վալէն» վանայ ճանապարհը Հարաւային-Արեւելեան հովտէ մը անցնելով Պիւնդէօլ լեռանց շղթայն ընդհատող խոր կիրճէ մը յետոյ՝ ընդարձակ , բարեբեր , և անհամար փոքրիկ գիւղերով չէն դաշտի մը վրայ կը բացուի , որ մինչև Եփրատայ (Մուրատ-Չայ) Արեւելեան ճիւղը Եսնիէ ըստած գետեկերեայ Քիւրտ գիւղ մը կը տարածուի : Գետնէ անցանք , ուրիշ անդին 50—60 մղոնի չափ տեղ տեղ ցրուած քանի մը գիւղերէ ու անոնց բոլորիցը մշակուած երկրներէ դատուելի ընտելութիւն չի տեսնուիր : Այս կողմերը շատ տեղ վրանաւորակ Քիւրտեր կան , որոնց վատ համալը լսելով չէինք համարձակել անոնց վրաններուն մօտենալ , բայց Քիւրտ պէյի մը հանդիպեցանք , որոյ վրայը մեր ճամբուն խիստ մօտէն ինքը Պիւնդէօլ Փոքրէ մը աւելի քաղաքովոր ձեռով գիւղ իւր վրանը հրաւիրեց թիչ մը հանգչելու : Վրանը մէջ տեղէն վարդապետով մը երկուքի բաժնուած էր , որուն առջին կողմը «խօսիլի» մը վրայ ձգուած լուրջէ միտալ և բարձր կային , հոն նստանք , և մեր հիւրընկալ Քիւրտը մածուն , շերտի , մեղր և սեխով պատուական ճաշ մը հրամայեց , խիստ ցաւելով թէ մեր յալուն վրայ տեղեկութիւն չ'ունէր , և եթէ առաջը գիտնար՝ ոչխար մը կը գետնէ 'ի պատիւ պէկուէրան . . .

«Ժամէ մը աւելի կենտրնէս յետոյ երբ ուղեցինք ճամբայ ելնել , Քիւրտ աղան իւր վրանէն բաւական հեռու տեղ ուղեկցեցաւ մեզ և սրտանց բարի ճանապարհորդութիւն մաղթելով (ուղորդար օրուն) մեկնեցաւ

«Քաղաքակրթութենէ դուրի Քիւրտէ մը երբեք չէր սպասուեր այսպիսի մարդասիրական հիւրընկալութիւն : Ոտոր վերայ քանի մը ժամ ետքը դժուար և աղքատ Հայ գիւղ մը հասանք , ուր գիւղերն անցուցինք , Հետեւեալ առաւօտուն Սիւրան-Տալիի վրայ ելանք , որոյ գագաթէն առաջին տեսութիւն մը ունեցանք Վանայ մեծ լճին վրայ , որ չքեղ և ընդարձակ դաշտի մը մէջ տարածուած , և երեք

կողմէն լեռանց շղթայով շրջապատուած է ասոնց վրայ շաղանակի , կաղնի , թամարէի , վայրի ձիւնի , մրտնիկի և ուրիշ ծաղկաւէտ տունկերու խիստ անտառներով ծածկուած է : Սիւրան-Տալիէն վար խաղաղ և անբարեկամ և ուղեւած սուրբի , ծիրանի , դեղձի , թուղի և նոսր ծառատունկերով ճիւղ ճանքէ մը հասանք Այճիվալ , որ աւերակ բայց գեղեցիկաւսն չին քաղաք մ'է : Մեծ մասն այս պտղատու ծառերով պարզարուած տեղայն Սիւրանի քովն տանք մէջ հիւր եղանք , որոյ տէրը Պիւնդէօլ Փոքրէ մ'էր . . .

«Վանայ լիճը՝ բոլոր Ասիական Տաճարատանի ամենէն մեծ լիճն է 70 մղոն երկայնութեամբ և 23 մղոն լայնութեամբ . մէջը խիստ գեղեցիկ փոքր կղզիներ կան , ասոնցմէ նշանաւորն Այճիվալն է , որ կը նստի Հայաստանեայց եկեղեցւոյ չորս արքեպիսկոպոսաց մին , (Այճիվալայ կաթողիկոսն ըսել կ'ուզէ) : Քարաշէն չին վանք մը ունի , զոր տեղացի Հայք մեծ յարգանք կը պահէին : Այս դեանիկ տեղայն կիւրտնայն այնչափ քաղցր է , որ չափ օղբ սոյցծաւ : Սիւրայ գիւղէ մեկնէն սիւրան , և իւր գիւղերն նկատմամբ կարծեցեալ դրսիս կոշտութեամբ արժանի է : Վանայի լիճնց երկրին կլիմային , ջուրին , և քաղաքին ու շրջակայից այլ և այլ սքանչելութեանց վրայ կը հպարտանան իրենց մէկ առեւծով լիճ՝ «Տիւրեմա» վան , ահիլթէ լիճն , «Այս աշխարհիս մէջ Վան , հանդերձեալն մէջ Արքա» յովութիւնն . . .

«Ըստ որում Այճիվալէն ցամաքով Վան երթալու ճանապարհն 80 մղոնի չափ հեռու է , մեծապէս ուրախացանք երբ Սիւրանի իւր նաւակաւ գիւղ գիւմայ անցունելու պատիւն ըրաւ Առի լիճիկունէն նաւակը մտանք , հետեւեալ առաւօտուն կանուխ Վան հասնելու մըտք , բայց քանի մը ժամ ետքը հովը փոխուելով Ռէյիս սարկից կենալ յԱյճիվալ , զէպ ուր հովը գիւղ կը մղէր : Հոն դուրս ելանք գիւղերը անցունելու , բայց արքեպիսկոպոսն և վանականը հիւրընկալուելու համար խիստ սուրբ ըլլալուն վանքին դուռը մինչև իսկ բանալ չուղեցին . . .

«Սիւրան ծաղկուն ալ՝ դարձեալ ճանապարհ ելանք , բայց այն խեղճուկ կուրով (թէքնէ) այնպէս գէշ նաւարկեցինք , որ հաղիւ թէ կէս օրէն ետքը Վանայ նաւամատոյցն եղող ծովածոցիկը կըցնէր հասնիլ : Քաղաքը ընէ 2 մղոնի չափ հեռու է , և 40 մղոն ընդարձակութեամբ դաշտի մը մէջ է : Շրջակայքը անհամար գիւղերով և չքեղ պարտէզներով լի . ըրենակիցը 15000 , մեծաւ մասամբ Հայ և Թուրք են , բայց քանի մը Քիւրտերէ : »

Սիւրանի վրայց տեղեկութիւններն ուրիշ անգամի կը թողուի :

Քիւրտի է որ մինչդեռ Քիւրտն ու Տաճիկը պէտք եղած ընդունելութիւնը չեն զտնար օտարական հիւրի մը , Հայաստանի Հայոց ամենէն բազմամարդ տեղ մը Հայ եպիսկոպոս կամ Կաթողիկոս մը վանքին դուռն անգամ չուղեր բանալ , այնպիսի տեղ մը , ուր անծանօթ ճանապարհորդին համար պանդոկ մը չկայ գիւղեր մ'ապաստանելու : Գետաւորի մը չէ որ Սիւրանից քաղաքակրթութեալ տեղութեանց առջև Հայն Արեւելեան խնդրոյն առթիւ կը պարծենար թէ Ասիոյ մէջ ամենէն լուսաւորեալ ազգն է . . .

Մնամ յարգանքը Գ. Գ.

. . . Խմբագիր .

Հոգաբարձութիւնս գոհութեամբ կը փութայ հրատարակել Ազգային Հիւանդանոցի մարտ ամսոյ նուիրաց ցանկը , յորում պատիւ ունի յիշատակել Վեհ. Հայրապետին մերոյ Տ. Տ. Գէորգ Արք. զան Կաթողիկոսի մի օրինակ Արարատ անուն ամառիկ երկնէն , որ Որբանոցի աղքատիկ ուսանողաց ընկերացնութեան յոռաճիւղութեամբ օգուտ կընծայէ , որոյ համար Հոգաբարձութիւնս կը փութայ իւր անհատական շնորհակալութեամբ անուանել Նորին Վեհափառութեան , որ 'ի հեռուստ յիշելով Հիւանդանոցիս որբութիւնը՝ փութայ անոնց որդին մասնակցել :

Նոյնպէս և շնորհակալեք կը յայտնէ Տրապիզոնի Գեր. Առաջնորդ Տէր Մատթէոս Արքեպիսկոպոսի այն օժանդակութեան համար որ իւր յորդանաններով տեղի ունեցաւ գոյանալ հետեւեալ հանգանակութիւնը :

Հանգանակութիւն , Տրապիզոնի չորս-ճակոյ գիւղերէ 'ի ձեռն Մայա գիւղի Տէր Մկրտիչ , Կապած գիւղի Տէր Յովհաննէս , Սադալիս գիւղի Տէր Միքայէլ քահանայից , լուրիս քալ 412 Հանգանակութիւն , 'ի ձեռն Կիրասոնի պատուարժան Թադ. Խորհրդ. գոյ զանապան անձերէ , լուրիս քալ 888 Նոյնպէս Անաստաս Բարիփի Յոյն վաճառականէն , լուրիս քալ 15 Հանգանակութիւն , 'ի ձեռն Սահառունի Վահան Էֆ. , լուրիս քալ 431 Հանգանակութիւն , 'ի ձեռն Դուրեման Տ. Կարապետ , Մուկուրեան Տ. Յովակիմ , Քահրիմանեան Տ. Մադաթիս , Տ. Սուքիաս և Տ. Մատթէոս քահանայից , լուրիս քալ 208 որոց գումարն է երկու հազար քանոն — Կօթի քալ լուրիս 2027

Շնորհակալութիւն կը յայտնեմք Պլուսակի Գեր. Առաջնորդ Տ. Բարթողի. մէտ Սրբազան Արքեպիսկոպոսի , որ հաճեցաւ Պլուսակի Մեծարդոյ ազգայիններէ հանգանակել մեծ և փոքր խափու և այլ կտակեղնք՝ կտոր 310 :

Իսկ Մեծ. Կ. և Բ. Եղաբար Աթոռն պօլուսեան իրենց բարի սովորութեան համաձայն այս տարի ալ Ա. Զատիկահ Տօնի առթիւ բարեհաճեցան հանգանալ կել Պաղք Բազարի և Պահէճ Գափու յի սեղանաւորներէ և այլ բարեկէր անձերէ 50 1/4 հատ արծաթ մէճիս , և այս գումարով 84 քալ աճաւ և 344 քալ բրինձ զրկել Հիւանդանոցի խնդրեաց , և յտեղեալ մէկ քալ արծաթ մէճիս յանձնել Հիւանդանոցի անտուկին , որոյ համար կը փութայ Հոգաբարձութիւնս իւր շնորհակալեք յայտնել հրապարտաւ , ինչպէս նաև հետեւեալ Մեծ. Նուրատու Ազգայնոց համար՝ որը շնորհ ըրին իրենց ձեռնտուութեամբ միմիարեկ Ազգային Հիւանդանոցի խնդրեցան , և վայելել անոնց որաւորն օրհնութիւնքը :

Մեծապատիւ Էֆէնդիք .

Յարութիւն Եֆէնդիքեան ձեռնաւոր Սրբազան Սարգիս Էֆէնդիք	
տիւ Լիւրա Օսմ. հատ	5
Սարգիս ՍԱՐԳԻՍԻԱՆ Լ. Օ.	5
Բարսեղ Ղազարոսեան	2 1/2
Պ. Ա. ձեռնաւոր Բարսեղ Աւեւախեան , Լ. Օ.	1
Ստեփան Պէօրէկեան , Լ. Օ.	1
Մանուկ Արաւանեան ձիւթալըտուղ քալ	353
Մ. Կիրակոս Պառաւեան Հաճիգիւղի , լուրիս քալ	92
Մեղքոն Կիրակեան Մանիսայի , Ամասիայի սաղոր քալ	66
Տիգրան Գափաճեան , զանապան ծառեր հատ	180
Գէորգ Գառապեան . Թորիկ ձուկ հատ	35
Գէորգ Գառապեան , միտիս Գ. 3000	
Բերայի բարեկէր ոմն , Քանդը քալ	6
Տէլլա Սուտա փաշա մէկ անտուկ փրարութեան զանապան զործիք և մէկ գրեխ (չիրինկա)	
Կարապետ Թիւրաթեան արծաթ մէճիս հատ	1
Սէլեան Օղլու արծաթ մետ. Գ.	2
Բարսէր ոմն , Յարութիւն Թըրքեանի ձեռք 100 նոց թղթալըտուղ հատ	3
Առաքել Թօղլեան 100նոց թղթ .	1
Խաչատուր Աւետիսեան 100նոց	45
Գէորգ Գառապեան »	45
Մարտիրոս Խաչատուրեան »	1
և Մեծ. Նաղարէթ Էֆէնդիք Ծահպալ Ս Զատիկահ տօնի առթիւ այցելութեան հարկէն աղատ մնալու համար նուիրած էր մէկ արծաթ մէճիս :	

1879 ապրիլ 3 Մնամ յարգանքը 'ի զիմաց Հոգ. Հիւանդանոցի Ս. Կիւրէնի Մ. Յովսէփեան

